շատ երկար դարերից ի վեր։ Բայց իրենց ընտանիքներում խօսում էին ուտիերէն լեզուով, որ մինչև յարդ պահպանել են անկորուստ։ Այս մի լուռն քաջ և անվեհեր ժողովուրդը մեր անցեալ պատմութեան մէջ մեծ դեր է խաղացել։ Իւր Հայ եղբօր հետ ձեռք ձեռքի տուած, մերթ ընդ մերթ նա սոսկալի կռիւներ է մղել իրենից աւելի թուով զերազանց անթիւ լեռնականների և արիւնարբու մահմեդական խաների հրոսակային խմբերի դէմ։ Քաջասիրտ Ուտիացիք շատ անգամ չարդ ու փշրուր էին անում իրենց դարաւոր թշնամիներին, իսկ շատ անգամ էլ մահաբեր հարուածներ էին ստանում նրանցից։

Երկար դարերի ընթացքում, քաջամարտիկ Ուտիացիք կատաղի կռիւներ մղելով բարբարոս լեռնականների և արիւնարբու մահմեդականների դէմ, անհաւասար պատերազմների մէջ՝ նրանց մի մասը բոլորովին չարդ ու փշուր եղաւ, մեծ մասը զերի տարուեց Աւղանիստանի, Բելուջիստանի և Պարսկաստանի խորքերը, մի մասն էլ մահմեդական կրօնն ընդունեց՝ միայն սոսկալի չարչարանքներից և անտանելի տառապանքներից ազատուած։ Մահմեդական կրօնն ընդունողներին՝ տիրող խաները տուին թէ առատ ու ընտիր վարելահողեր և թէ բէկութիւն ու պէսպէս արտօնութիւններ և մնացած քրիստոնեայ Հայերին ճնշելու և նեղելու անծայր ու անսահման ամէն տեսակ իրաւունքներ։ Իսկ մի փոքր մասը միայն ամենածանր զոհեր և ահագին զրկանքներ կրելուց յետոյ, հա-